

ՄԱՅԸ ԵՒ ԵՍ

Մահը դաշինք է կնքեր
Հետս կարծես ակամայ,
Կ'ուզէ ըլլալ ինձ ընկեր
Շուքի մը պէս մշտակայ:

Ժամագրութիւն ունի ան
Հետս բռնի, անդադար,
Եւ ամէն ժամ ու վայրկեան
Խօսիլ կ'ուզէ անբարբառ:

Կը նախանձի քայլերուս,
Ինծմէ առաջ կը վազէ,
Ու ցոյց կուտայ խոր, անլոյս
Վիհեր, փոսեր աւազէ:

Ֆիլատելֆիա, 12 Ապրիլ 1944

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Խաչապըսակ կամար կամար
Անդերու մէջ սարերն ի վեր.
Կը բարձրանան ոսկեկտար
Հայրենիքիս լոյս տաճարներ:

Ճամբայ մը լուռ կը գալարուի
Քաղքին մէջէն ծորան ծորան,
Կը կորսուի ու կը բացուի
Առջեւ ժամու մը հայկական:

Կանաչ կարմիր սարի կողէն
Արահետ մը վար կը քակուի,
Հոն լըռութեան մէջ հոյաշէն
Մարմար տաճար մը կը բացուի:

Խաչապըսակ կամար կամար
Դաշտերուն մէջ սարերն ի վեր,
Կը կոթողուն լուսակտար
Հայրենիքիս բեր տաճարներ:

Աղեքսանդրիա
24 - 10 - 43

Ու կը սպառնայ ինծի միշտ՝
Սիրով խնդայ սիրտըս երբ,
Ու պատճառել կ'ուզէ վիշտ
Չարութիւնով դաւածեփ:

Ան կ'ուզէ որ լուռ մընամ՝
Յոյսին երես դարձուցած,
Եւ օրերս իմ լուսածամ
Դառնան կսկիծ, աղէտ, լաց:

Բայց ես ճամբաս կը քալեմ
Գոհ, անտարբեր ու անվախ,
Մահէս յետոյ՝ զի գիտեմ
Կ'ապրին երգերն իմ խիղախ:

Վերն ամեհի ժայռի կուրծքին
Հիւզեր քովէ քով կը շարունին.
Փայտէ տընակ, խաչ մը ճակտին
Ահա տաճարն հայ գիւղակին:

Զինակատար ամպերն ի վեր
Կը թափառի գիծ մը լայնշի.
Ան հայրերուս ճամբան է դեռ՝
Երբ մոմերով ուխտի գացին:

Կը հեղեղի լոյս մը այգուն
Ուսերն ի վար կատարներուն,
Հազար կայծեր կը բռնունին
Լուսաւորչի տաճարն հանգոյն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԿ

ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆ-ԷՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ
ՀԱՆՁՆՈՒԱԾ ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐ: — Հրա-
տարակուած է «Հայկական Դորապիկեր» տիտ-
ղոսի տակ հաւաքածոյ մը հայ գրողներու
գործերէն՝ թարգմանուած ռուսերէնի: Կը պա-
րունակէ արեւելահայ և արեւմտահայ գրագէտ-
ներէն ընտրուած քառասուն պատմութեանքներ
հետեւեալ հեղինակներէն՝ Գրիգոր Զօհրապ, Յա-
կոբ Պարոնեան, Երուանդ Ստեան, Ռուբէն
Զարգարեան, Երուստի, Յովհաննէս Թումա-
նեան, Շիրվանզադէ, Նարգոս, Դերենիկ Դե-
միրճեան, Ստեփան Զօրեան: Այս հաւաքածոյի
մասին՝ ռուս գրագէտ մը՝ Խերսոնսկի, մեծ
գովեստով կը խօսի ներկայացնելով զայն ռուս
հասարակութեան, կը շեշտէ մանաւանդ Սովե-
տական Հայաստանի մէջ վերջերս երեւան եկած
տական Հայաստանի մէջ վերջերս երեւան եկած
յայտնի գէմքերը, գլխաւորապէս Ստ. Զօրեանը՝
եր «Սովետական քաղաք»-ին մէջ, և Դ. Դեմիր-
ճեանը՝ Ժողովրդական կեանքէ առած նոր
վէպերուն և «Վարդանանք» մեծ պատմական
վէպին մէջ:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 2000-ամեակը. — Երեւանի
մէջ տօնախմբուած է այս տարւոյն ընթացքին
հայ թատրոնի 2000-ամեակը: Այս առթիւ ա-
յացուցուած է որ հայ թատրոնը ամենահինն է
բովանդակ Սովետական Միութեան ազգերու
հնագոյն պատմութեան մէջ: Եւ ստուգիւ ըստ
արձանագրութիւններու Հայաստանի մէջ առա-
ջին թատրոնը կառուցուած է Տիգրանակերտի
մէջ 69-ին Քրիստոսէ առաջ, և երկրորդ մը
53-ին Արտաշատի մէջ, ուր բեմագրուած
է Եւրիպիդէսի «Քրմանոյշները» ողբերգու-
թիւնը: Ներկայիս Արտաշատի շրջակայքը
սկսած են վերակառուցանել հինուորաց ամփի-
թատրոնը, և ուր 1947-ին ծրագրուած է ներ-
կայացնել «Քրմանոյշները»:

Տ. ԶՈՒՀԱՃԵԱՆԻ ԱՐՇԱԿ Բ.Ը — Երեւանի
Սպենդիարեանի անուան Պետ. Օբերայի մէջ
բեմագրուած է նշանաւոր Տիգրան Զուհա-

ճեանի Արշակ Բ. Թատրերգութիւնը մեծ յա-
ջողութեամբ, որ 1868-ին Պոլսոյ մէջ, Նաուսի
թատրոնի բեմին վրայ ներկայացուած էր առա-
ջին անգամ ղեկավարութեամբ Երգահանին:

Ժ.Թ. դարու կիսուն հայ երաժշտութեան մե-
ծագոյն ներկայացուցիչն է ան և հայկ. օբերայի
հիմնադիր. իր գործերն են նաեւ Զիւլիքի օբերան
(1891), Արիֆ (1872), «Քէօսա Քէհա» (1874)
և «Լէրբերի» Զօհր Սալա» երեք օբերէթ-
ները: Իտալական մամուլը անուանած էր զինքը
«Իւ վերտի Արմէն» (Հայ վերտի): — Տ. Զու-
հաճեան ծնած է 1837 և մեռած 1898-ին:

ՄԱՔՍԻՄ ԿՈՐԲԻՒ ՄԱՀՈՒԱՆ 10-ամեակին
Սով. Միութեան զանազան քաղաքներու մէջ
տեղի ունեցած են գրական ակումբներ, հաւա-
քոյթներ վերագնահատելու համար մեծ գրա-
գէտին արժանիքը: Սով. Միութեան ազգերու
լեզուներով բեմագրուած են անոր թատերա-
խաղերը, այսպէս «Թշնամիները», «Զեքոյնե-
խաղերը», «Արեւի տղաքը» և այլն: Մաքսիմ Կոր-
բին գործերը շատ սիրուած և կարգացուած
են Սով. Միութեան Ժողովուրդներու քով:
Թարգմանուած են բազմաթիւ լեզուներու:
Անոր «Մայրը» վէպը 106 անգամ հրատարա-
կուած է, «Մանկութիւնը» 77 անգամ:

Փարիզի մէջ՝ 25 Յունիսին Փլէյելի Սրահին
մէջ Ժ. Ռիշար Պլօք խօսած է հոն բազմու-
թեան մը առջեւ մեծ գրագէտին վրայ՝ ցոյց
տալով անոր բացառիկ արժանիքը:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ
25-ամեակը. — Մեծ հանդիսաւորութեամբ տօ-
նախմբուած է Երեւանի մէջ Պետական Համա-
լսարանի 25-ամեակը՝ գիտական-գրական նիս-
տերով Ապրիլ 22-26-ին: Առաջին նիստին խօսք
տեղով Ապրիլ 22-26-ին: Առաջին նիստին խօսք
առած են ակադեմիական Յ. Մանանդեան և Վ.
Համբարձումեան: Ներկայ եղած են ուրիշ ա-
կադեմիականներ, փրոֆէսորներ և գիտահե-
տազօտական Հաստատութեան աշխատողներ և
ուսանողներ:

Համալսարանի Տնօրէն - վարիչ Հրաչեայ
Բունեաթեան բացած է նիստը՝ բացատրելով

Պետ. Համալսարանի կառարած գերը հայ կեանքին մէջ:

Ակադ. Յ. Մանանդեան գիտական զեկուցումը րած է հետեւեալ նիւթի վրայ. « Գառնիի յու նարէն արձանագրութիւնը և Գառնիի տաճարին կառուցման ժամանակը »: Իսկ Ակադ. Վ. Համբարձումեան, նշանաւոր աստղագէտ՝ խօսած է « Աշխարհածնութեան հարցերը աստղագիտութեան տեսակէտով » նիւթին վրայ:

Երկրորդ նիստին՝ Ապրիլ 23-ին տեղի ունեցած են բնագիտական, բնալուծական և բժշկական նիւթերու շուրջ զեկուցումներ, այսպէս փրոֆ. Գ. Արեշեան խօսած է « Ամուսնութիւնը և ընտանիքը Սովետական Պետութեան մէջ » նիւթին վրայ, փրոֆ. Մ. Թումանեան « Գարիի զարգացման հիմնական հանգրուանները Հայաստանի մէջ » նիւթի մասին, և այլն...:

Ապրիլ 24-ին և 25-ին կառարուած զեկուցումներէն յիշեալ փրոֆ. Ա. Տէր Պօղոսեանի « Բնագիտութիւնը և կենսաբանութիւնը ըստ Անանիա Շիրակացոյ մատենագրութեան », փրոֆ. Ա. Աբրահամեանի « Յովհաննէս Սարկաւադի նորայայտ աշխատութիւնները »:

Ապրիլ 26-ին՝ վերջին նիստին խօսած է փրոֆ. Ա. Ղարեբեան Հայոց ծագման մասին. « Ե՛րբ է հայ ժողովուրդին պատմութեան սկիզբը »: Բանախօսը հայոց հնգերոպական ծագման լեզուաբանական փաստերը և հիմերը տկար կը համարի, պատմական թուական կը համարի Արտաշէսեան Թագաւորութեան թուականը (Ն. Գ. 189) և կ'առաջարկէ այս թուականին սկսիլ բուն հայ ժողովուրդին պատմութիւնը, և անկէ առաջուանը համարել նախնեաց աւանդական պատմութիւնը՝ սկսուած անյիշատակ ժամանակներէ:

ԵՐՈՒԱՆԴ ԵԱՀԱԶԻԶԻ ԾՆՆԴԵԱՆ 90-ամեակը: — Երբունի բանասէր Եր. Շահազիզ Յունուար 13-ին կը լրացնէր իր ծննդեան 90-ամեակը: Ան տղթ. է բանասիրական գիտութիւններու. ծնած է 1856-ին Աշտարակին մէջ, նախնական կրթութիւնը առած է Երեւանի գաւառական դպրոցը, 1870-ին մտած Մոսկուայի Լազարեան ճեմարանը: Արժեքներու ուսուցչական ասպարէզին 80-ական թուականներուն և միաժամանակ գրաւորական աշխատանքի. կը հրատարակէ յօդուածներ զանազան թերթերու, մանաւանդ « Լուսին »-ի, « Տարազ »-ի

մէջ: Նախասովետական շրջանին իր արտագրած գործերն են « Զ. և Լ. դարերու Հայոց մուսուր կեանքը » (1894), Միքայիլ Ղ. Նարանդեանցի կենսագրութիւնը (1897), Մկրտիկ Յ. Լիւն (1900), « Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը » (1901), « Պատմական պատկերներ » (1903), « Մեր վանքերն ու նրանց դերը հայ կեանքում » (1901), « Նոր Նախիջևանը և նոր Նախիջևանցիք » (1903), Խորեն Արք. Գալֆայեան և Նարանդեանի « Ախցիք » (1903), Գարիի Պատկանեան (1910): Սովետական Հանրապետութեան ժամանակ, աւելի ինքզինքը աւելի մեծոտիկ աշխատութեան՝ արտագրած է « Գարիի Սոցիալիզմ » (1927), Հիմ Երեւանը (1931), « Դիւան Միք. Նարանդեանի » (1932), « Դիւան Խաչատուր Արշակեանի » (1940), 2 հտ. « Սմբատ Շահազիզի կեանքը » (1944), « Խաչատուր Արշակեանի կեանքը » (1946): Տպագրութեան յանձնուելէք գործ մըն է՝ արգէն պատրաստ Դիւան Ռաֆայիլ Պատկանեանի: Ունի գեւ ձեռագիր գործերուն մէջ « Աշտարակ »-ի ընդարձակ պատմութիւնը, և « Զէքեղահայերու » պատմութիւնը:

Այս թուարկումէն կը տեսնուի որ Եր. Շահազիզ մեղուաջան աշխատող մը եղած է, և քննական բովբէ անցուցած է արդի գրականութեան յայտնի գէմքեր, հաւաքած ատաղձն ու վաւերացութիւնները ուրիշներու անդրադոյն ուսումնասիրութեան համար: Երեւանի մէջ մինչեւ 1930 տարին՝ վարած է Գրական Թանգարանին տեսչութիւնը, անոր բուն ջանքերուն հետեւանքով է որ այնքան արժէքաւոր փաստաթուղթեր հաւաքուած են ասդին անդին, և որոնք անհրաժեշտ են արդի հայ գրականութեան գէմքերը խորագոյն կերպով ուսումնասիրելու համար:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Խ. Հայաստանի մէջ գրական-մշակութային շարժումը շատ յայտնի և մեծապէս միաթափական երեւոյթ մըն է. հոն անխոնջ լծուած են աշխատութեան, կը կատարուին ուսումնասիրութիւններ, լոյս կ'ընծայուին գրական հատորներ, կը կազմուին բառարաններ, որոնցմով հայ ժողովուրդն է որ կը կատարէ իր վերելքը: Հոս կու տանք պատկերը վերջին շրջանի

տեղի ունեցած հրատարակութիւններուն. մաս մը արգէն ծանուցինք մեր 1945-ի միացած տարեկան թիւին մէջ:

ԼԵՕ-ի « Հայոց պատմութեան » գործին Գ. հատորը, էջ 1119:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ. « Յանուն հայրենիքի և կուլտուրայի պաշտպանութեան ». հոս ամփոփուած են մեծ քնարերգական՝ պատերազմի շրջանին գրած հայրենասիրական և հրապարակագրական էջերը:

ՆԱԻՐԻ ԶԱՐԵԱՆԻ երկերու առաջին հատորը, ուր ամփոփուած են 1918-1943 տարիներուն գրած գործերը՝ ինքնագիր բանաստեղծութիւններ և թարգմանութիւններ:

ԷԴ. ԹՈՓՁԵԱՆ. Ուսումնասիրութիւն մը Վ. Տէրեանի մասին:

Գ. ԱՐՈՎ. — Սիրոյ և արգարութեան երգերը՝ Սայեաթ Նովան:

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆ. — Պատմութեան « Անխուսափելի », « Խոշտանգուածի աւանդ », « Շուն », ներշնչուած վերջին ուսուցիչական պատերազմի ապրումներէն, ինչպէս նաեւ « Վարդանանք » պատմական մեծ վէպը:

ՍՏ. ԶՕՐԵԱՆ. — « Արա գեղեցիկ », « Մայր », « Կալ կարօն », « Տաքնապի օրերին », ինչպէս նաեւ « Պապ Թագաւոր » պատմական վէպը:

Ն. ԶԱՐԵԱՆ. — « Արա գեղեցիկ » ողբերգութիւնը:

ՀՐ. ԱՃԱՌԵԱՆԻ « ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ » — Հաշակաւոր Հր. Աճառեան հրատարակած է վերջերս Խ. Հայաստանի մէջ « Հայ Անձնանունների » բառարանը, ուր նախաժողով ունի ծանօթութիւն տալ հայ գրականութեան, պատմութեան, գեղարուեստի և ընդհանուր մշակոյթի պատկանող հայ անձերու անուններու մասին: Բաղմահատոր և հետաքրքրական գործ է. բայց ինչ որ կ'երեւի զուտ մասնագիտական է՝ սահմանափակուած ըլլալով պարզապէս անձերու անուններու շուրջ, դուրս թողլով յատուկ անուններն ընդհանրապէս: Այն պարագայի տակ օգտակար գործ մը, որ կու գայ գէթ չափով մը պակասը լեցնելու ընդհանուր յատուկ անուններու բառարանին:

ԱՐԵՂԵԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՃԱՌԸ. — Մ. Արեղեան, հայ գրականութեան պատմութեան մեծ աշխատաւորը իր մահով կը թողուր կարեւոր ատաղձ մը, զոր հարկ էր կարգաւորել ու վերածել հատորներու: Կազմուած է « Արեւիկան գրական ինստիտուտ », որուն նպատակն է ուսումնասիրել գիտական ոճով և ժողովրդականացնել հայ գրականութիւնը: Աշխատակիցները նոյն կաճառին 1940-41 լոյս ընծայեցին գրականութեան պատմութեան դասագիրք մը երեք հատորով՝ միջնակարգ վարժարաններու համար, « Հայ գրականութեան պատմութիւնը » վեց հատորով, որու առաջին հատորը հրատարակուած է 1944-ին և կը պարունակէ ազգ. գրականութեան պատմութիւնը սկզբնական շրջաններէն մինչեւ Գր. Նարեկացի (Ժ. դար): Այս գործը Մ. Արեղեանին պատրաստածն է: Բ. հատորը որ Ժ-ԺԺ դար կ'երթայ՝ կ'ստանաւ ինչպէս մեծ մատենագիրէն, և զոր լրացնել կ'աշխատին այսօր կաճառին աշխատակիցները, ինչպէս նաեւ յաջորդ հատորները՝ օգտուելով իր թողած նիւթէն:

Կաճառը ձեռնարկած է նաեւ ուրիշ օգտակար աշխատասիրութիւններու, Հայ լրագրութեան պատմութեան, հայ դասական գործերու հրատարակութեան, և այլն:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Արտասահմանի հայ գրագէտները, ներշնչուած տակ եւրոպական գրողներու՝ այս վերջին տարիներուն ալ արտագրեցին նորանոր գործեր, բանաստեղծութիւններ, վէպեր, ուսումնասիրական մենագրութիւններ, ինչպէս Վահրամ Սօֆեանի « Նոր Գարուն »-ը, Յ. Աստուրեանի « Անգաման »-ը, Վահրամ Տատրեանի վէպերը, « Դէպի անապատ », « Նեւի Պեղա », « Գերեզմաններու մէջ », և այլն, Արշակ Աւագյանի « Պատմութիւն Հայ գաղթականութեան », և այլն, որոնց մասին պիտի անդրադառնանք յաջորդաբար թերթիս թիւերուն մէջ:

ԽՄԲ.